ուժերը հայ իրականութեան մէջ, բովանդակ Կովկասում, ամբողջ Ռուսաստանում:

Երեւոյթը իր խորը պատճառները ունէր ոչ միայն կովկասեան եւ ռուսական իրականութեան մէջ, այլ եւ դուրսը, արտասահմանում: Դարձեալ յիշենք ժամանակը: Հայկական Հարցը միջազգային դիւանագիտութեան սեղանի վրայ էր դրուած 1878–ից, Բերլինի վեհաժողովից սկսած: Ապշութեան աստիճանի տխմար ռուս քաղաքագիտութեան ականջին «հայկական վտանգի» մասին էին փսփսացել դիւանագէտները: Եւ ո՞վ ամենից առաջ — նենգ Ալբիոնը, Ռուսիոյ դարաւոր թշնամին եւ ոսոխը: Ահաբեկելու համար ռուս դիւանագէտներին, կասեցնելու համար հայկական բարենորոգումների պահանջից: Մի «նոր Բոլգարիա» չէին ուզում ստեղծել ռուս քաղաքագէտները: Զառամած գլուխ Գորչակովին դեռ մի քանի տարի առաջ (1878) Բիկոնսֆիլտը համոզել էր Բերլինում, ձեռք քաշել Թրքահայաստանից: Ա՛յն Գորչակովին, որ Կովկասի եւ Հայաստանի քարտէսին անգամ ծանօթ չէր, որ դաղափար չունէր տուռծախի առարկայ դարձուած երկիրների եւ նրանց սահմանների մասին:

Եւ ահա՝ նոր կարգախօս ռուս քաղաքագիտութեան համար — «Հայաստանը առանց հայերի»: Ռուս աշխարհականներին թափուր Հայաստանն էր պէտք եւ ոչ թէ հայկական Հայաստան: Հարկաւոր էր ուրեմն, որ ոչ միայն սահմանի այն կողմը չդթայազերծուի համիդեան բռնակալութիւնը, «քարտ բլանշ» ստանալով ճերմակ ցարից, հարկաւոր էր նաեւ, որ Կովկասեան Հայաստանը եւ արեւելեան հայութիւնը եւս ահաբեկման մատնուին: Այդպէս էլ եղաւ: Կովկասահայ բովանդակ կեանքը երկաթի օղակների մէջ առնուեցաւ: Մամուլը եւ դրականութիւնը հալածուեցան: Ծայր տուաւ քաղաքական–հասարակական մի վտանգաւոր յետաշրջական հոսանք:

Այս վերջինը ուժ ստացաւ, թանձրացաւ եւ համակեց մեր ներքին կեանքը նաեւ այն պատճառով, որ հայութիւնը քաղաքականօրէն յուսախաբ դտաւ ինքզինքը: Պետութիւնները դաւադրել ու դաւաճանել էին նրան, 61–րդ յօդուածը մնում էր մեռած տառ: Ցուսոյ եւ ոչ մի նշան, ընդհակառակը համատարած յուսալքումն:

Հասարակական յետաշրջութիւնը բնականաբար չէր կարող չանդրադառնալ դրականութեան մէջ: Ազատութեան երգը, յեղափոխական պայքարին նուիրուած արձակը շնչելու եւ արտայայտուելու միջոց չունէին այլեւս: Նրանց անուանի ներկայացուցիչները, Պատկանեան եւ Րաֆֆին, իբենց վերջին տարիներն էին ապրում: Միեւնոյն ժամանակ, հրապարակ էին իջնում նոր արձակագիրներ եւ բանաստեղծներ, բայց՝ բոլորովին տարբեր ուղղութեամբ: Արձակագիրը իր ուշադրութիւնը դարձնում է առօրեայ, իրական կեանքի վրայ, քնարական բանաստեղծն էլ ամփոփում է ինքն իր մէջ, իր ներքին աշխարհը եւ ապրումները երգել սկսում: Ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը ազատ էին գոնէ արտաքին, դրաքննչական կաշկանդումներից: Նոյնը չէ՞ր միթէ պարագան նաեւ արեւմտահայ իրականութեան մէջ: Նման եւ աւելի յոռի պայմաններն էին պատճառներից մէկը, թերեւս գլխաւորը, որ այնտեղ մեր գրականութիւնը սահմանափակուեցաւ զուտ բանաստեղծութեան, մասամբ էլ իրապաշտ վիպագրութեան մէջ:

Կովկասահայ կեանքում սկիզբը դրուեցաւ մի կողմից իրապաշտ վիպագրութեան եւ միւս կողմից՝ քնարական բանաստեղծութեան: Առաջինի չեշտուած ներկայացուցիչը, ուահահորդը եղաւ Շիրվանզադէն, երկրորդինը՝ Յովհաննէս Յովհաննիսեան: Սխալ կը լինէր պնդել, ի հարկէ, թէ նրանցից առաջ իրապաշտ վէպը եւ զուտ քնարերգութիւնը տեղ չունէին արեւելահայ գրականութեան մէջ: Ո՛չ. հէնց նոյն Ռաֆայէլ Պատկանեանը եւ Րաֆֆին Շիրվանզադէից ու Յովհաննիսեանից դեռ շատ տարիներ առաջ տուել էին նոյն ուղղութեամբ յաջողուած գործեր: Եւ սակայն, այդ գրականութեան յատկանշական գիծը չէր, եւ, ընդհակառակը, միանգամայն յատկանշական՝ յիշեալ նորերի համար, կազմելով նրանց ստեղծագործութեանց ուղն ու ծուծը:

Մասնաւորելով մեր խօսքը Յովհաննէս Յովհաննիսեանի մասին, պիտի ասենք, որ նա սկսաւ ստեղծագործել որպէս զուտ քնարերգակ եւ այդպէս էլ մնաց մինչեւ իր կեանքի